ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԴՎԻՆԻ 554 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԺՈՂՈՎԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

550-ական թվականների սկզբներին սասանյան դուռը, ելնելով իր քաղաքական շահերից, հանդուրժող վերաբերմունք ուներ Հայոց Եկեղեցու նկատմամբ: Հայաստանի պարսիկ մարզպանը, հետևելով Խոսրով I Անուշիրվան արքայի (531-579) հրահանգներին, դրական դիրքորոշում ուներ Հայոց Եկեղեցու հանդեպ: Սակայն բարեգուշակ հնչերանգներ ունեցող այդ քաղաքականությունը ուներ նաև բացասական դրսևորումներ, որոնք ի դերև էին հանում պարսից արքունիքի և Հայ Եկեղեցու միջև փոխադարձ վստահության և կայուն հարաբերությունների հնարավոր հեռանկարները: Հայոց Եկեղեցու դրությունը բարդացավ նաև այն պատճառով, որ նույն ժամանակ Բյուզանդիայում Հուստինիանոս I կայսեր (527-565) կողմից քաղկեդոնականությունը հռչակվեց պետական դավանանք, ի հետևանս որի, Հայ և Հույն Եկեղեցիներն անջրպետվեցին միմյանցից, և նրանց միջև ծայր առան դավանաբանական, եկեղեցաբանական բանակռիվները: Ստեղծված պայմաններում Հայոց Եկեղեցին հարկադրված էր հոգևոր-գաղափարական պայքարի դաշտ նետվել՝ մաքառելով երկու ճակատում՝ Բյուզանդիայի կայսերականացված Եկեղեցու և նրանով զորացած նեստորականության դեմ: Անհավասար այդ գոտեմարտում հայ հոգևորականներն ստիպված էին դաշնակիցներ որոնել Արևելքի քրիստոնյաների մեջ և, անշուշտ, պատեհության շրջանակներում, ջանում էին ապահովել Հայ Եկեղեցու նկատմամբ արյաց տիրակալի բարեհաճ վերաբերմունքը: Հարկ է նշել, որ Բյուզանդիայի քաղկեդոնական Եկեղեցու հանդեպ հայ հոգևորականության ներհակ դիրքավորումը դրական արձագանք գտավ սասանյան արքունիքում, քանի որ վերջինս հասու եղավ այն իրողությանը, որ Հայոց Եկեղեցին, հայ ժողովուրդը այլևս դավանական միության մեջ չեն Բյուզանդիայի քաղկեդոնական Եկեղեցու հետ: Այդ հանգամանքը Հայաստանն անջրպետում էր Բյուզանդիայից նաև քաղաքականապես և արյաց տիրակալին հույս ներշնչում Հայաստանը պահել իր պետական-քաղաքական ուղեծրում՝ Հայ Եկեղեցին անհրաժեշտ պարագաներում դարձնելով օրինապահ և համակերպվող:

Իհարկե Հայ Առաքելական Եկեղեցին, որպես հայ ժողովրդի հավաքական գոյություն, նրա ստեղծած հոգևոր-մշակութային արժեքների, ներքին ինքնուրույնության պահպանման զորեղ գործոն, հետամուտ էր ազգային արժեքները օտարի ձուլող քաղաքականությունից ձերբազերծելուն: Հայ հոգևորականները հասկանում էին, որ սասանյան դռան հանդուրժամիտ վերաբերմունքն անցողիկ է: Արդեն 540-ական թթ., Հայոց Կաթողիկոս Ներսես

Բագրևանդացու (548-557) աթոռակալության տարիներին, վերարծարծվեցին պարսից պաշտոնեության կողմից Հայ Եկեղեցու հանդեպ կիրառած կրոնական հալածանքները: Այս առումով ուշագրավ վկայություն ունի Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ): Համաձայն նրա հաղորդած մի տեղեկության, Հայաստանի պարսիկ պաշտոնատար Դենշապուհը «զորմզդական հուրն վառեաց ի Ուշտունիս և ստիպէր զքրիստոնեայս կրակի երկիր պագանել»[1]: Ենթադրվում է, որ Խոսրով արքան, անտալով Հայոց Ներսես Կաթողիկոսի թախանձանքին, Դենշապուհին ետ է կանչել Հայաստանից՝ այնտեղ մարզպան նշանակելով Վահրամ Վշնասպին, որն արյաց տիրոջից իբր հրահանգ ուներ մոգերին թույլ չտալ բռնի միջոցներով կրոնափոխ անել հայերին[2]: Սակայն, ինչպես հավաստում են հայ մատենագիրները, Վահրամ Վշնասպը շարունակել է իր նախորդի անհանդուրժող քաղաքականությունը քրիստոնյաների նկատմամբ, որի հետևանքով Սասանյանների գերակայության ոլորտներում գտնվող բազում քրիստոնյաներ բռնությամբ հավատափոխ են արվել կամ սրի մատնվել[3]: Հասկանալի է, հայերը ևս պետք է ենթարկվեին Սասանյան տերության մեջ հարուցված արծարծված կրոնական հալածանքներին:

Մյուս կողմից շարունակվում էին դավանական հակամարտությունները Հայ և Բյուզանդական Եկեղեցիների միջև: Հայոց Եկեղեցին, ընդհուպ մինչև 554 թ. Դվինի եկեղեցաժողովը, տակավին պաշտոնապես և բացորոշ ձևով չէր անջրպետված Բյուզանդիայի քաղկեդոնական Եկեղեցուց, սակայն հետզհետե ավելի էր խորանում նրանց միջև գցված անջրպետը: Քաղկեդոնականության և նեստորականության նկատմամբ Հայոց Եկեղեցու ժխտական վերաբերմունքը նկատի առնելով Պարսկաստանի միաբնակ ասորիներն ապավինեցին Հայ Եկեղեցու հովանավորությանը: Մասամբ նրանց ջանքերով էր, որ պարսից դուռը վերահասու եղավ այն իրողությանը, որ հայերի և միաբնակ ասորիների դավանական կողմնորոշումն ունի հակաքաղկեդոնական, հակաբյուզանդական ուղղվածություն: Այսպես կարծելուն թելադիր է այն փաստը, որ Դվինի 554 թ. ժողովից քիչ առաջ Հայոց Կաթողիկոս Ներսես II-ի կողմից միաբնակ ասորվոց եպիսկոպոս ձեռնադրված Աբդիշոն[4] հայտարարեց, որ Պարսկաստանի «արքայից արքայի հրաման է, թէ իւրաքանչիւր ոք զիւր հաւատ կալցի»[5]: Ստեղծված պայմաններում սասանյան արքունիքն իրեն հպատակ քրիստոնեական Եկեղեցիներից առաջնությունը վերապահեց Հայոց Եկեղեցուն: Նեստորականությունը մղվեց հետին դիրքեր և թուլացրեց պայքարը

---

[1] Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 84:

[2] Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1784, էջ 257; Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 537: Մ.Չամչյանն այս դեպքերի ժամանակ Հայոց Կաթողիկոս է հիշում Մովսես II Եղվարդեցուն, որը սակայն գահակալել է ավելի ուշ՝ 574-604 թվականներին:

[3] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, Լ, էջ 57; Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 74:

[4] Ազգությամբ ասորի:

[5] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 60:

միաբնակների դեմ՝ առաջին հերթին, իհարկե, տեղի տալով Հայ Եկեղեցու հարաճուն և զորավոր ազդեցության առջև: Այս իրողության ապացույց է այն փաստը, որ նեստորականները հրաժարվեցին միաբնակ ասորիների հետ ունեցած հակամարտությունը վերարծարծելուց՝ երկյուղելով, որ հայերի հորդորով արյաց արքան կարող է հալածանքներ հարուցել իրենց դեմ[6]:

Սասանյան արքա Խոսրով Անուշիրվանը, ելնելով իր քաղաքական շահերից, հաշվի առավ Հայոց Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշումը և ըստ այնմ մշակեց իր քաղաքականությունը նրա հանդեպ: Արյաց արքան տեղյակ էր, որ Հայոց Եկեղեցին հետևողական կերպով անհաշտ դիրքավորում ունի Բյուզանդիայի Եկեղեցու հանդեպ, որը, հովանավորվելով Հուստինիանոս I կայսեր կողմից, աստիճանաբար ուժեղացնում էր պայքարը միաբնակների և առաջին հերթին, իհարկե, Հայոց Եկեղեցու դեմ: Հենց Դվինի նշված ժողովի նախօրյակին, 553 թ., կայսրը Կոստանդնուպոլսում գումարեց հինգերորդ Տիեզերաժողովը, որը հաստատեց Քաղկեդոնի 451 թ. ժողովի որոշումները, Լևոն Պապի հավատո բանաձևը: Սակայն Արևելքի (Եգիպտոսի, Պարսկաստանի, Հայաստանի, Ասորիքի) միաբնակ քրիստոնյաները չընդունեցին այդ ժողովի որոշումները: Միջագետքի միաբնակ ասորիները, որ ժամանակին մասնակցել էին Քաղկեդոնի ժողովին[7], նույնպես դեմ եղան Կ. Պոլսի 553 թվականի ժողովի ընդունած որոշմանը: Մինչդեռ նեստորականությունը, նոր շունչ ու ոգի առնելով այդ տիեզերաժողովից, իր շոշափուկները տարածեց նաև արաբական աշխարհում[8]: Կ. Պոլսի 553 թվականի տիեզերաժողովի նպատակն էր՝ Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովի որոշումները պարտադրել կայսրության արևելքում մեծամասնություն կազմող հույն քրիստոնյաներին: Ընդ որում, վերջիններիս միջավայրում քաղկեդոնականության հավատարիմ հենարանը նեստորականներն էին:

Ստեղծված պայմաններում Հայոց Եկեղեցին հարկ է, որ ցուցաբերեր արմատական դիրքորոշում Կ. Պոլսի հիշյալ ժողովի ընդունած որոշումների հանդեպ: Դա աներկբա հավատամքով դրսևորվեց 554 թ. Դվինում գումարված ժողովում, որտեղ հայ հոգևորականները պարզորոշ կերպով հրապարակեցին Հայոց Եկեղեցու դավանական դիրքորոշումը՝ արտահայտելով հայ ժողովրդի հավաքական կամքը: Միաբնակությունը բնականոն կերպով խոր արմատներ էր ձգել ժողովրդի ընդերքում՝ դառնալով հոգևոր հարամնա արժեք և դավանական ինքնորոշում: Հայ ժողովրդի հոգուն խորթ էր Հռոմեական Եկեղեցում ծնունդ առած քաղկեդոնականությունը, որին ի հակակշիռ, հայ ժողովուրդը և Հայոց Եկեղեցին հոգևոր բնական մղումով պահպանեցին միաբնյա դավանանքը՝ այն դիտելով որպես քրիստոնեության նախնավանդ և առավել անաղարտ, ճշմարիտ և Հայոց հոգևոր հայրերից ավանդված հավատք: Բայց

---

6 «Հայք արքայից արքայի ցուցանեն և մեզ չարաչար աշխատութիւն հասուցանեն» (Գիրք թղթոց, էջ 60):

7 J. Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. VII, 1960, P. 144, 165.

8 Н. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV-VI в.в., Москва – Ленинград, 1964, с.15.

առավել կարևոր էր այն հանգամանքը, որ քաղկեդոնական դավանանքի ընդունումը Հայոց Եկեղեցուն կախման մեջ կդներ Բյուզանդիայի կայսերակա-նացված Եկեղեցուց, որի հետևանքով Հայ Եկեղեցին պետք է զրկվեր իր հոգևոր ինքնությունից և ընկներ կայսրության քաղաքական ազդեցության տակ, նաև կորցներ իր ապահարկությունը (բյուզանդական կղերը չուներ այդ առանձնաշնորհ վիճակը): Եվ իրերի բնական ընթացքով Հայոց Եկեղեցին պայքարի մեջ մտավ իր ոգուն խորթ քաղկեդոնականության դեմ: Դավանական այդ անհավասար ոգորումներում նրան զորակցում էին Արևելքի միաբնակ քրիստոնյաները՝ իրենց գաղափարական զինանոցի՝ Ալեքսանդրիայի Եկեղեցու գլխավորությամբ:

Դվինի 554 թ. ժողովը, Կ. Պոլսի 553 թ. ժողովին բացասաբար արձագանքելով, պետք է հստակ ու որոշակի պատասխան տար այն հարցին, թե Հայ Եկեղեցին դավանական ինչպիսի դիրքորոշում է ունենալու, արդյոք պահպանելո՞ւ է իր դավանական ինքնուրույն դիմագիծը, թե՞ կախման մեջ է ընկնելու Բյուզանդական Եկեղեցուց: Դա ուներ նաև քաղաքական կարևոր նշանակություն, քանի որ Հայ Եկեղեցին մարմնավորում էր նաև հայոց պետականավարական ինքնակայությունը: Որպես հայ ժողովրդի միասնության, նրա պետականության կրող, Հայոց Եկեղեցին դառնում էր նաև քաղաքական ազդու գործոն, ուստի նրա դավանական ուղեգիծը ուներ նաև քաղաքական ինքնորոշման նշանակություն և նպատակամիտված էր հայությանը զերծ պահել օտարի ուծացնող ազդեցությունից: Եկեղեցու նման դերն առավելագույնս կարևորվում էր այն պատճառով, որ կայսերականացված քաղկեդոնականությունը հետզհետե ավելի էր վերածվում Բյուզանդիայի արևելյան քաղաքականության հենարանի: Ուստի այդ դավանության հանդեպ ժխտողական վերաբերմունքն ինքնին հայ ժողովրդի և նրա Եկեղեցու բնական հակազդեցությունն էր կայսրության համաձուլարար քաղաքականությանը: Այս հանգամանքը Հայոց Եկեղեցուն հարկադրում էր սահմանազատվել քրիստոնյա հզոր հարևանից ու նրա Եկեղեցուց և կողմնորոշվել դեպի նրանց ներհակող ուժերը՝ լիապես բացառելով նաև Բյուզանդական Եկեղեցու հետ նվիրապետական միության դույզն իսկ հնարավորությունը: Անշուշտ, նման ուղեգիծը ցայտունորեն դրսևորում էր Հայոց Եկեղեցու ինքնագո հիմքերի կայունությունը: Այն վկայում էր նաև, որ Հայոց Եկեղեցին թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական առումներով դարձել է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը կերտող զորեղ ու ճանաչված ուժ:

Փաստորեն Հայոց Եկեղեցին անհավասար մաքառումների դաշտ էր նետվում թե՛ դավանական և թե՛ քաղաքական ասպարեզներում: Նրա հենարանը հայ ժողովուրդն էր և նախարարական հայ ասպետությունը՝ երկրի ներքին ինքնավարության զորեղ պահապանը:

Հայոց Եկեղեցին իր դիրքերն ամրապնդելու համար առաջին հերթին պետք է խորտակիչ հարված հասցներ նեստորականությանը, որպեսզի ձերբազատվեր երկու ճակատում մաքառելու ստիպողական անհրաժեշտությունից: Ուստի Դվինի 554 թ. ժողովն իր առաջին հարվածն ուղղեց քաղկեդոնա-

կանության հոգևոր ակունքներից մեկը համարվող կրոնական այդ հոսանքի դեմ՝ պաշտոնապես մերժելով այն: Ժողովի ընդունած «Ուխտ միաբանության Հայոց աշխարհիս» վերտառությամբ վավերագիրն ամբողջ հայ ժողովրդի կամքն արտահայտելով, բացորոշ կերպով ազդարարում էր, որ պարսից Խոսրով Անուշիրվան արքայի 24-րդ տարում, իմա՝ 554 թ., Դվինում հայերը հավաքվեցին ժողովի՝ նեստորականների դեմ պայքարելու նպատակադրումով[9]: Թեև ժողովական այդ թղթում բոլորովին չի նշվում քաղկեդոնականության անունը, սակայն, ինչպես ճիշտ կերպով նկատել են ուսումնասիրողները, այդտեղ նեստորականության տակ նկատի են առել նաև քաղկեդոնականությունը[10] դրանով իսկ շեշտելով նրանց դավանական երկվորյակներ լինելու հանգամանքը: Ժողովական այդ վավերագրում պայքարի սլաքը ուղղված է Խուժաստանից իբրև վանական Հայաստան թափանցած նեստորական աղանդավորների դեմ: Ժողովը դեռևս պատեհ չէր համարում պաշտոնապես մարտահրավեր նետել քաղկեդոնական դավանամոլ կողերին և խուսափում էր Բյուզանդական Եկեղեցու հետ բացորոշ առճակատումից:

Դվինի ժողովի հռչակած դավանաբանական սկզբունքներն արտահայտում էին Հայաստանի բոլոր գավառների հոգևորականության լիաբուռն կամքը: Դժվար է համաձայնվել այն կարծիքին, թե իբր ժողովի գումարման պահին հարավային Հայաստանի եպիսկոպոսները համակիր էին նեստորականներին, կամ էլ Պարսից պետության կողմից նրանց հանդեպ ցուցաբերած հովանավորության պատճառով հրաժարվել էին նեստորականության դեմ պայքարելուց, որպեսզի չհարուցեին սասանյան արքունիքի դժգոհությունը[11]: Սակայն այն փաստը, որ հարավային Հայաստանի առավել ազդեցիկ Մարդպետական և Արծրունյաց եպիսկոպոսները ստորագրել են Դվինի ժողովի ընդունած «Միաբանության ուխտի» տակ, բացառում է նման եզրահանգման հնարավորությունը: Նշենք նաև, որ խուժիկ (խուժաստանցի) նեստորականները, ինչպես վկայված է նշված ժողովական «ուխտ»-ում, հարավային Հայաստանում ազգով պարսիկ քրիստոնյա Գրիգոր Մանանհիր Ռաժիկի անունով (նահատակվեց 549 թ. Դվինում, Դենշապուհ մարզպանի ձեռքով) կառուցեցին եկեղեցի (նույն 549 թվականին)՝ կամենալով Հայաստանի հարավային շրջաններում տարածել իրենց ուսմունքը, սակայն հարավային Հայաստանի հայ հոգևորականներն ավերել տվեցին այդ եկեղեցին՝ դիտելով այն իբրև նեստորականների հերձամետ գաղափարների կենտրոն[12]: Հարկ է նշել նաև, որ Դվինի հիշյալ ժողովից հետո Դվինի Մայր Աթոռից Վասպուրականի եկեղեցականներին ուղարկվեց հատուկ գրություն՝ «Որոշումն

---

9 Գիրք թղթոց, էջ 72:

10 Կ. Տեր-Մկրտչեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, Ա, Վաղարշապատ, 1908, էջ 211; Ե. Տեր-Մինասեան, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 107; Մ.Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 547:

11 Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 374:

12 Գիրք թղթոց, էջ 72-73:

նեստորականացն ի սրբոյ եկեղեցւոյ» վերտառությամբ[13], ուր վերստին շեշտվում է նեստորականության դեմ պայքարի հրատապ անհրաժեշտությունը: Այդ գրությունը ոչ թե վկայություն է նեստորականների հետ Վասպուրականի հոգևորականության մերձակայության մասին, այլ ընդհակառակը, վերջիններիս համարում է այդ աղանդամետ հոսանքի դեմ մաքառող կարողունակ ուժ, որն ի զորու էր հակակշռել Հայաստանի հարավային գավառներում նեստորական քարոզիչների պառակտիչ գործունեությունը, ինչը հետզհետե ավելի էր իրեն զգալ տալիս՝ սպառնալով Հայոց Եկեղեցու հինավուրց հիմքերին:

Միաժամանակ չպետք է անտես առնել այն հանգամանքը, որ քաղկեդոնականությունը, Հուստինիանոս I-ի կողմից պաշտոնական դավանանք հռչակվելուց ի վեր, ինչպես վերը նշեցինք, որոշապես փոխեց Սասանյան արքաների վերաբերմունքը Հայոց Եկեղեցու նկատմամբ: Նոր իրավիճակը սասանյան դռանը հուշում էր քաղաքական նոր ուղեգիծ որդեգրել Հայ Եկեղեցու հանդեպ, քանի որ վերջինս արդեն ձեռք էր բերում զորավոր գործոնի դեր Պարսից պետության վարած քաղաքականության մեջ, մինչդեռ Նեստորական Եկեղեցին փաստորեն վերածվում էր Արևելքում Բյուզանդական Եկեղեցու հենարանի: Ուստի պայքարը նեստորականության դեմ համարժեք էր քաղկեդոնականության բացասմանը: Հարկ է նշել, որ Հայոց Եկեղեցին քաղկեդոնականության դեմ պայքարը շարունակում էր նեստորականության դեմ մաքառումների քողի տակ, լռելյայն, պաշտոնապես չհայտարարելով այդ մասին: Դա, անշուշտ, պայմանավորված էր դիվանագիտական կանխահոգ զգուշավորությամբ: Թեև Բյուզանդիայում պաշտոնապես ընդունվել էր քաղկեդոնականություն, սակայն Կայսրության Եկեղեցին տակավին չէր անջրպետվում Արևմտահռոմեական Եկեղեցուց, և քրիստոնեական աշխարհը երևութապես մնում էր միասնական ու նույնադավան: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ քաղկեդոնական ուսմունքը ծնունդ էր առել Արևմտահռոմեական Եկեղեցում, որն այդ պատճառով չընդդիմացավ Բյուզանդիայում քաղկեդոնական դավանանքը պաշտոնապես ընդունելուն: Այս պայմաններում Հայոց Եկեղեցու հայրերը գոնե ձևականորեն պետք է պահպանեին միասնությունը քրիստոնեական Եկեղեցիների հետ և հրաժարվեին Բյուզանդական Եկեղեցու դեմ բացորոշ առճակատումից: Հայոց Եկեղեցին դեռևս չէր դիմում Բյուզանդական Եկեղեցուց բացահայտ տահմանազատման, որպեսզի ձեռք չբերի քրիստոնեական աշխարհում պառակտում և դավանական անջատամետություն սերմանողի համարում, ինչը կարող էր որակվել իբրև հերձված և դատապարտվել քրիստոնեական Եկեղեցիների կողմից՝ Հայոց Եկեղեցուն նետելով դավանական մեկուսացման գիրկը, իր բացասական հետևանքներով հանդերձ: Այդուհանդերձ, դավանական ներհակությունը Հայ և Բյուզանդական Եկեղեցիների միջև ծանրակշիռ փաստ էր, որը չէր կարող զգալ չտալ իրեն: Անհրաժեշտ էր հիմնավորել հայ հոգևորականության

13 Նույն տեղում, էջ 76-77:

դիրքորոշումը՝ հենվելով առաջին երեք տիեզերաժողովներում հաստատված նախնական քրիստոնեական Հավատո հանգանակի վրա (ընդունվել էր 325 թ. Նիկիայի տիեզերաժողովում), որին հակասում էր Քաղկեդոնի չորրորդ տիեզերաժողովում ընդունված հավատո բանաձևը: Պահպանելով նախորդ երեք տիեզերաժողովների հաստատած հավատքը, Հայ Առաքելական Եկեղեցին դրանով իսկ տարամիտվում էր քաղկեդոնականությունից՝ լռելյայն ձևով, առանց հրապարակային ցույցերի ու հայտարարությունների:

Հայ Եկեղեցու դիրքորոշումը հաստատուն կերպով օրինականացվեց Դվինի 554 թ. ժողովում: Անշուշտ այդ փաստը անկնատ չմնաց ո՛չ հայ և ո՛չ էլ բյուզանդական մտաշխարհում: Նույն ժողովին մասնակցած Հովհաննես եպիսկոպոսը, որ հետագայում բազմեց Հայոց Կաթողիկոսական գահին, Սյունյաց եպիսկոպոսին և իշխանին հղած թղթում գրում էր, որ Դվինի այդ ժողովում Հայ եկեղեցականները նզովել ու հալածական են արել «զպիղծ Նեստորիանոսս և զքաղկեդոնիտս»[14]:

Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող ձեռագիր ժողովածուի մեջ եղած մի գրությունն ուղղված է արիոսականության, քաղկեդոնականության և նեստորականության դեմ: Ընդ որում այդ գրությունը կազմվել է Մուշեղ իշխանի պատվերով (վերջինս հիշվում է Բագրատունի տոհմանունով): Թեև գրությունը հեղինակ չունի, բայց այն փաստը, որ դա կազմել է տվել Մուշեղ Բագրատունի իշխանը (որի պատվերով Հայոց Կաթողիկոս Ներսես II-ը գրել է նաև «Թուղթ հաւատոյ» գրությունը[15]), թույլ է տալիս կարծելու, որ հիշյալ ժողովածուի մեջ պահպանված գրվածքը նույնպես հեղինակած պետք է լինի Ներսես II-ը: Այդ վավերագրում Կաթողիկոսը հերքում է քաղկեդոնական ուսմունքը և բոլոր հետևողական միաբնյաների պես փորձում տեսականորեն, գաղափարաբանական առումներով հիմնավորել Հայոց Եկեղեցու որդեգրած միաբնակության դավանանքը: Նկատենք նաև, որ նույն Կաթողիկոսի հրամանով կազմվեցին նաև Դվինի հիշյալ ժողովի ընդունած կանոնները[16], որոնք կոչված էին ամրապնդելու Հայ Եկեղեցու ինքնակայությունը:

Հարկ է նաև նշել, որ հետագայում Հովհան Օձնեցի Կաթողիկոսին (717-728) վերագրված մի գրվածքում նույնպես նշվում է, որ Դվինի 554 թ. ժողովը գումարվել է Քաղկեդոնի ժողովին և նրա ընդունած Հավատո բանաձևին հակակշռելու նպատակադրումով[17]: Ավելի ուշ, 865 թ., երբ Կ. Պոլսի Պատ-

---

14 Գիրք թղթոց, էջ 79:

15 F. Macler, Notices de Manuscrites arméniens, Revue des Etudes Armeniennes, t. II, fasc. 2, 1922, p. 248.

16 Ա. Ղլտճյանը նշում է, թե այդ կանոնները սահմանվել են ավելի վաղ, և Ներսեսը միայն խմբագրել է դրանք (Ա.Ղլտճեան, Սահմանք և կանոնք սրբոյն Ներսէսի Հայոց Հայրապետի («Հանդէս ամսօրեայ», 1908, էջ 166): Սակայն նման ենթադրության համար հիմնավոր կովանոցներ չկան: Ներսես II-ի կանոնները կազմվել են նրա հրամանով (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ, Երևան, 1971, էջ 200 և հտ.):

17 Գիրք թղթոց, էջ 221:

ոհարք Փոտի կողմից արծարծվեց Հայ և Բյուզանդական Եկեղեցիների միության խնդիրը. Հայոց Կաթողիկոս Զաքարիա Զագեցուն Փոտի հղած թղթում նշվեց, որ հայերը 554 թ. Դվինի ժողովում մերժել են Քաղկեդոնի ժողովի որոշումները[18]: Նույնն է հավաստված նաև 11-րդ դ. վրաց մատենագիր Եփիմիոս Երուսաղեմցու «Հակաճառություն ընդդեմ Սոսթենես Մարմաշենցու» գրվածքում[19]:

Պարսից արքունիքը նույպես վերահասու եղավ Դվինի ժողովի հակաքաղկեդոնական ուղղվածությանը և, բնականաբար, դրականապես արձագանքեց հայ հոգևորականության դիրքորոշմանը: Փոտ Պատրիարքի հիշյալ թղթում հավաստվում է, որ Դվինի ժողովից հետո պարսից արքա Խոսրով I Անուշիրվանը բարեհաճ վերաբերմունք է ցուցաբերել Հայ Եկեղեցու նկատմամբ՝ նրան վերապահելով նաև «Հայոց աշխարհի հարկահանության գործը» տնօրինելու իրավունքը[20]: Անշուշտ այս տեղեկությունից չպետք է միանշանակ հետևցնել, որ պարսից արքայի կողմից Հայ Եկեղեցու հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը բխում էր հայ ժողովրդի և նրա Եկեղեցու շահերից: Սասանյան գահակալն ամենից առաջ հետամուտ էր իր պետության քաղաքական շահերին: Նա համոզված էր, որ Հայ Եկեղեցին, մերժելով քաղկեդոնականությունը, դրանով իսկ փոխում է իր քաղաքական կողմորոշումը՝ մերձակցության հաստատում եզրերի դիմելով Պարսից պետության և նրա շահնշահի հետ:

Փոտի վերոնշյալ թղթում ասվում է, որ Խոսրով Անուշիրվանը «դաշինքի մեջ մտավ» Հայոց Կաթողիկոսի հետ, նույնիսկ իր որդուն դարձրեց նրա որդեգիրը[21]: Անշուշտ ստեղծված պայմաններում Հայ Առաքելական Եկեղեցու քաղաքական վարքագիծը չուներ հակասասանյան միտումներ: Սակայն Հայաստանի եկեղեցապետական միասնության հզոր կռվան հանդիսացող Հայ Առաքելական Եկեղեցին, քրիստոնեության պատվարը լինելուց զատ, գրավոր կանոնադրումներով օրինակարգում էր երկրի պետա-իրավական, քաղաքացիական հարաբերությունները՝ այնտեղ ստեղծելով միասնական իրավակեցություն՝ ի հակակշիռ Սասանյան պետության և նրա պաշտոնական գաղափարաբանությունը դարձած զրադաշտական կրոնի: Այս հանգամանքը չէր կարող անտեսվել Սասանյան արքունիքի կողմից: Այն անխուսափելիորեն հակադրություն էր ստեղծում պարսից վերնախավի և Հայոց Եկեղեցու միջև: Ասվածից հետևում է, որ վերջինիս հանդեպ սասանյան տիրակալի վերաբերմունքը չպետք է բացարձակացնել:

Փաստորեն Դվինի 554 թվականի ժողովն ի դերև հանեց Քաղկեդրոնի 451

---

18 Православный Палестинский сборник, т. XI, вып. I, С. Петербург, 1892, с.181.

19 Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա. Երևան, 1934, էջ 106-107:

20 Православный Палестинский сборник, XI (I), с. 181.

21 Նույն տեղում: Փոտի այս թղթի մասին տե՛ս նաև «Փոտը Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց», աշխ.՝ Ն. Ակինեանի («Հանդէս ամսօրեայ», 1968, թ. 1), Պ. Անանեան, Փոտ Պատրիարքի թղթակցությունը հայոց հետ («Բազմավէպ», 1990, թ. 1-2):

թ. տիեզերաժողովի որոշումները՝ Կ. Պոլսի 553 թ. տիեզերաժողովի կողմից Հայ Առաքելական Եկեղեցուն պարտադրելու փորձերը, և մեկընդմիշտ մերժեց քաղկեդոնյան հավատո բանաձևը՝ անդառնալիորեն որդեգրելով միաբնակության դավանանքը: Դրանով իսկ ցայտունորեն դրսևորվեց Հայոց Եկեղեցու դավանական և ճիրապետական անկախությունը մյուս Եկեղեցիներից և ավելի կարևորվեց նրա՝ իբրև քաղաքական ազդու գործոնի դերը հայ-բյուզանդական և հայ-պարսկական հարաբերություններում: Հարկ է նշել, որ հայ ժողովրդի և նրա Եկեղեցու համար միաբնակությունն ուներ նաև քաղաքական ինքնորոշման նշանակություն: Այն զորեղ հարևանների ուծացնող միտումներից ժողովրդին ձերբազերծելու զորավոր միջոց էր:

Հայաստանի հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքում Դվինի 554 թ. ժողովի դարակազմիկ նշանակությունը դրսևորվեց նաև նույն թվականին Հայոց մեծ թվականի ընդունմամբ: Ստեփանոս Տարոնեցու հավաստմամբ, 554 թվականին հայ և բյուզանդական Եկեղեցիների միմյանցից սահմանազատվելն այն աստիճանի նշանավոր իրողություն էր, որ այդ տարվանից հայերն սկզբնավորեցին իրենց ազգային թվականությունը՝ «կարգեցին զթուականն Հայոց»[22]: Հայ մատենագիրները Հայոց մեծ թվականի ընդունումը հարակցում են Դվինի 554 թ. ժողովի հետ՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ հենց այդ ժողովում էր, որ առաջին անգամ դրվեց հայկական ինքնուրույն թվական ստեղծելու խնդիրը, որի լուծմամբ Հայոց Եկեղեցին կարող էր ստեղծել առավել ինքնուրույն տոնացույց և ծիսակարգ:

Հովհան Օձնեցի Կաթողիկոսի՝ հայոց ներեկեղեցական և իրավական կյանքի այդ մեծ բարեկարգողի անունով պահպանված վերոհիշյալ գրության մեջ նույնպես նշված է, որ Դվինի 554 թ. ժողովը կայացել է «ի սկզբան թուականութեանն Հայոց»[23]:

Սամուել Անեցու հավաստմամբ, «իմաստունքն ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուական Հայոց՝ որով ուղղեսցեն զՋատիկն Տեառն՝ այլովք հանդերձ»[24]:

Դվինի 554 թ. ժողովը հիրավի դարձակետ էր Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ:

---

22 Տե՛ս Ստեփաննոս Տարոնեցի, II, Բ, էջ 82-83:

23 Գիրք թղթոց, էջ 221:

24 Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 74: Նկատենք, որ թեև Հայոց մեծ թվականը հաշվվում է 552 թ. հոկտեմբերի 11-ից (երբեմն 553 թ. հունվարի 6-ից), բայց այդ թվականն ստեղծելու որոշումն ընդունվել է 554 թ. Դվինի ժողովում: